Հավելված N 88
Հաստատված է
Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ. հուլիսի 26-ի N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.4-Մ2-4)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մանագետներից մեկը կամ Բաժնի ավագ մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է հանրապետության գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակի ուսումնասիրում, դասակարգում և ներկայացնում է առաջարկություններ դրանց տարբերակված և արդյունավետ օգտագործման վերաբերյալ,
2. իրականացնում է գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված իրավական, նորմատիվային փաստաթղթերի մշակում և դրանց իրականացումն ապահովող միջոցառումների մշակման աշխատանքներ,
3. իրականացնում է գյուղատնտեսական հողերի արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակման աշխատանքներ,
4. մասնակցում է գյուղատնտեսական հողատեսքերի համակարգված դիտարկումների անցկացման կարճաժամկետ և երկարաժամկետ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառման, ոռոգման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման աշխատանքներին,
5. իրականացնում է հողի շուկայի հետ կապված խնդիրների ուսումնասիրում և իրավական դաշտի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման աշխատանքներ,
6. իրականացնում է իր գործառույթների շրջանակներում Եվրասիական տնտեսական միությանը և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի

քննարկումներին մասնակցությունը:

Իրավունքները՝

• ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսական ռեսուրսների տարբերակված և արդյունավետ օգտագործման վերաբերյալ,

• մասնկացել գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների մշակման աշխատանքներին,

• մասնակցել գյուղատնտեսական հողատեսքերի համակարգված դիտարկումների անցկացման կարճաժամկետ և երկարաժամկետ, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների կիրառման, ոռոգման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակման աշխատանքներին,

• հողի շուկայի հետ կապված իրավական դաշտի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման նպատակով տեղեկատվություն պահանջել համապատասխան ստորաբաժանումներից և մարմիններից,

• մասնակցել իր գործառույթների շրջանակներում Եվրասիական տնտեսական միությանը և ԱՊՀ անդամակցությամբ պայմանավորված աշխատանքային խմբերի քննարկումներին:

Պարտականությունները՝

• ուսումնասիրել հանրապետության գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործման վիճակը և դասակարգել ստացված տեղեկատվությունը,

• մշակել գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված իրավական, նորմատիվային փաստաթղթեր,

• բացահայտել գյուղատնտեսական հողերի չօգտագործման պատճառները և մշակել արդյունավետության բարձրացման միջոցառումներ,

• տրամադրել ջրային ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ եզրակացություններ,

• ուսումնասիրել հողի շուկայի հետ կապված խնդիրները:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Կոնֆլիկտների կառավարում
2. Բանակցությունների վարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Փաստաթղթերի նախապատրատում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: